ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012թ. հոկտեմբերի 1 **թիվ 93 -Ա**

ԱՇՏԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1985-1994ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ, ԶՈՐԱԿՈՉԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Զինապարտության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Աշտարակի զորակոչային տեղամասում 2012 թվականի աշնանային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1. Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարին՝

1) 2012 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սկսել 1985-1994թթ. ծնված քաղաքացիների զորակոչի բժշկական հանձնաժողովի աշխատանքները և անցկացնել 1985-1994թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,

2) զորակոչել արական սեռի այն զորակոչիկներին, որոնց 18 տարին լրանում է զորակոչի օրը, ինչպես նաև այն զորակոչիկներին, որոնց զորակոչման տարկետումները լրանում են 2012 թվականի աշնանային զորակոչի ընթացքում:

2. Հաստատել՝

1) զորակոչային հանձնաժողովի կազմը համաձայն N 1 հավելվածի,

2) զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը համաձայն N 2 հավելվածի,

3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը համաձայն N 3 հավելվածի,

ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Աշտարակի բժշկական կենտրոն>> ՓԲԸ գործադիր տնօրենին՝

1) մասնագետ-բժիշկներին օգնելու համար բուժքույրական անձնակազմից տրամադրել 4 բուժքույր,

2) կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների ֆլյուորոգրաֆիան, արյան խումբը, ռեզուս-ֆակտոր <<ՄՈՊ, ԷԿԱԳԵ, ՍՈՆՈԳՐԱՖԻԱ>>, արյան և մեզի անալիզները,

3) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողավի կողմից ուղարկվել են բուժման,

4) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

5) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Աշտարակի ԱՏՃՁ-ի տնօրենին ՝

1) զորակոչի ժամանակ տարածքային զինկոմիսարիատի կողմից հատուկ առաջադրանքներ կատարելու համար հատկացնել մեկ մեքենա,

2) ներկայացնել գրաֆիկ՝ նշելով զինակոչիկների մեկնման օրը մինչև ՀՀ հավաքակայան:

6. Աշտարակի տարածաշրջանի համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

7. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

8. Հանձնարարել Աշտարակի ոստիկանության բաժնին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

9. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Աշտարակի զինվորական կոմիսար, գնդապետ Ս. Գրիգորյանի վրա:

ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 1-ի
թիվ 93 -Ա կարգադրության

ԿԱԶՄԸ

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի աշնանային զորակոչային հանձնաժողովի

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ	- Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ հանձնաժողովի նախագահ
Ա. ԱՓՈՅԱՆ	- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզային ոստիկանության Աշտարակի բաժնի պետի տեղակալ, կապիտան
Ս.ՀՈՎՍԵՓՅԱՆ	- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- Հանձնաժողովի ավագ բժիշկ
Ե.ՂՈՒԿԱՍՅԱՆ	- Հանձնաժողովի քարտուղար

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 1-ի
թիվ 93-Ա կարգադրության

ԿԱԶՄԸ

Աշտարակի տարածքային զինվորական կոմիսարիատի աշնանային զորակոչային բժշկական հանձնաժողովի

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ	- Աշտարակի տարածքային զինվորական կոմիսար, գնդապետ հանձնաժողովի նախագահ
Կ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- թերապևտ, ավագ բժիշկ
Գ.ՕՀԱՆՅԱՆ	- վիրաբույժ
Ա.ՄԻՐԶՈՅԱՆ	- ակնաբույժ
Ն.ՄԱՆՎԵԼՅԱՆ	- մաշկավեներոլոգ
Հ.ԲՈՅԱԽՉՅԱՆ	- քիթ-կոկորդ-ականջ
Լ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- նյարդաբան
Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	- հոգեբան
Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ	- ատամնաբույժ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2012թ. հոկտեմբերի 1-ի
թիվ 93-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի

Լ.Վասիլյան - զորակոչային բաժանմունքի պետ, մայոր, հանձնաժողովի նախագահ
Ս.Հովսեփյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
համայնքապետեր - ըստ բնակավայրերի /համաձայնությամբ/

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ